

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Վտանգից առաջ և վտանգի ժամանակ.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. խօսքան Շուշում. Նամակ
Նախագի. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի
լուրեր խմբագրին. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՍԱԿԱՆ. Վաղի.

ՎՏԱՆԳԻՅ ԱՌԱՋ ԵՒ ՎՏԱՆԳԻ ԺԱՄԱՆԱԿ

Երբ մի որ և է վտանգ զեռ. չը հասած
զգուշացնում էք մարդկանց, յիշեցնում էք
նրանց իրանց պարտաւորութիւնները մա-
սին.—մարդիկ սովորաբար ոչինչ ուշադրու-
թիւն չեն դարձնում ձեր խօսքերի վրա:
Իսկ երբ որ ձեր նախադրուած վտանգը
հասնի է,—այն ժամանակ նոյն անտարբեր
մարդիկ յանկարծ դառնում են վերին աս-
տիճանի եռանդաւ, աշխատում են մի քանի
շարժելով, մի քանի օրվայ մէջ իրադրոյն
այն ինչ որ պէտք է կատարէին անընդա-
մարաւ տարին երկ ընթացքում....

Երկրորդ տարիներ շարունակ մամուլը ցոյց
է տալիս որ քաղաքը անմարդկայն դրութեան
մէջ է պահւում, որ փոխանակ բուսական-
նութիւնը զարգացնելու հետեւեալ ոչն-
չացնում են Տրապարակական այգիները,
ասկայն մամուլի խօսքերի վրա ոչ որ ու-
շադրութիւն դարձնող չը կայ: Մամուլը
անընդհատաբար կրկնում է, որ ջրանցք
անցկացնելու հետ միասին հարկաւոր էր
իրադրոյն քաղաքում և անմարդկութեան
խողովակների ստորերկրայն սխտերը.—բայց
մամուլի այդ արարարացի ցուցմունքները
մաղի չափ ուշադրութեան չեն արժանա-
նում: Լրագրութիւնը չէ դադարում ամէն
օր այն իրողութեան վրա մասնացոյց անե-
լուց, թէ քաղաքի բազմաթիւ փոստ պա-
շարեղէններ, խակ մրգեր, անառողջ ուտե-
լիքներն են վաճառվում.—սակայն այդ
փաստերի վրա ոչ որ ներդրութիւն չէ քա-
շում որ և է ուշադրութիւն դարձնելու:

Բայց ահա հասնում է վտանգը, հաս-
նում է որ և է հիւանդութիւն, յայտնա-
վում է քաղաքում դիֆթերիա խօսքը.—և
նոյն մարդիկ, որոնք տարիներ ընթաց-
քում ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում
մամուլի ձայնի վրա՝ հիմա, վտանգը աչքի
առջև ունենալով, միջից կես են լինում մի
քանի շարժելով ընթացքում այն ամբողջ
աշխատանքը կատարելու, որ պէտք է կա-
տարէին երկար տարիների ընթացքում և
ամէն օր....

Եւ ահա, վտանգը հասնելուն պէս միայն,

նոր են նկատում թէ քաղաքը դանդաղ է
վերին աստիճանի հակառողջական դրու-
թեան մէջ, թէ ոչ մի տեղ արտաքնոյնները
չեն մարքովում, թէ բոլոր անմարդկութիւն-
ները ուղղակի թափվում են փողոցի մէջ-
տեղ, թէ կատարելապէս բացակայ են ան-
մարդկութիւնների համար ստորերկրայն կա-
նաչներ և այլն, և այլն....

Վտանգը հասնելուն պէս միայն սկսում
են մի անգամից և միաժամանակ՝ մարքի
փողոցները, որոնք երբէք չէին մարքովում,
մարքի տալ արտաքնոյնները, որոնք տարիներ
ըն ընթացքում չէին մնում արտաքնոյնու-
թիւնների արգելի փողոցներում խակ մը-
գեր վաճառելու, և այլն....

Եւ ինչ որ չը կարողացան, կամ չիմացան
տարիների ընթացքում հետազնտէ կատա-
րելը.—ուշում են հրաշքի պէս մի անգամից
կատարել: Եւ ինչպէս մի ժամանակ իրանց
անտարբերութիւնը ծայրայեղութեան էին
հասցնում, այնպէս էլ հիմա իրանց արտա-
սովոր եռանդը հասցնում են ծայրայեղու-
թեան: Ամբողջ քաղաքում հրապարակական
արտաքնոյններ չը կան, այլ փողոցների բո-
լոր անկիւնները ժողովուրդը արտաքնոյն էր
դարձրել. այժմ նոր արտաքնոյն չեն շինում,
բայց ժողովուրդը վրա տուգանք են դնում,
որ նա բոլոր փողոցների անկիւնները ար-
տաքնոյն է դարձնում: Առաջ չէին արգե-
լում նոյն խակ խակ և փոստ մրգեր
փողոցում ծախելու, իսկ այժմ միայն
կարծ սկսել են արգելել նոյն խակ լաւ մը-
գեր փողոցում ծախելու, այսպիսով զրկում
են ողորմելի այգեծառերին ամառվայ իրանց
միակ վաճառակից: Եւ արդարեւ երբ վաղու-
թիւնը արգելում է փողոցում որ և է ու-
տեղեղէն ծախելու, նա իր ոչնչացրած ու-
տեղեղէնների համար փողով վարձատրում
է ծախողներին, իսկ մեզ մօտ ընդհանրու-
թեան օգտի համար ոչնչացրած են այս
կամ այն ուտեղեղէնները, բայց ծախողին
աղքատացնում, զրկում են նրան և նրա
ընտանիքը օրական հացից, այսպիսով այդ
տեսակ բազմաթիւ աղքատ ընտանիքներն
էլ վտանգի մէջ են դրում հիւանդանալու....

Ամեն բանում ծայրայեղութիւն. սովորա-
կան ժամանակ ծայրայեղ անտարբերութիւն
և անփութութիւն,—իսկ վտանգը հասնե-
լուն պէս ծայրայեղ, տեսլային եռանդ,—
ահա մեր զործունէութեան յատկանշիչը:

Եւ հէնց որ վտանգը կանցնի,—կրկնվեց
կրկին կատարելապէս անտարբերութեան մէջ
և մեր ամբողջ կեանքի վրա նորից կը տրեւ
կատարելապէս անգործութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՒՆԻՍԵ ՇՈՒՇՈՒՄ

Յունիսի 12-ին լուր ստացվեց, որ քաղաքից
զուրա Բագրուից եկած մի մարդ է վախճանվել.
զաւառական բժիշկը անդամահատութեան միջո-
ցով գտաւ, որ հիւանդի մահը առաջացել է խօ-
ւրայի կերպարանք ունեցող ցաւից: Այդ բանը
հաստատվեց միւս օրը. հիւանդի հետ մի ֆուրգո-
նում եկած քահանան, որը և թաղել էր մեռածին,
հիւանդացաւ քաղաքում: Բժիշկները գտան քահա-
նայի հիւանդութեան մէջ խօլէրայի ընտորոյ
յատկութիւններ: Պէտք էր անմիջապէս հեռաց-
նել նրան, բայց քաղաքի կողմից որը և է նախա-
պաշարաւորութիւն էր կատարված, չը կային
միջնակ անգամ հասարակ ղեղնափնէկական միջոց-
ներ, չը կար պատրաստ բնակարան, ուր կարելի
լինէր տեղադրել հիւանդին: Քաղաքային բժիշկ
պ. Բահաթինանի առաջարկութեամբ երկուս-
տայնի մի խումբ իսկոյն մի փողոցի գոմար
հաւաքեց, զինց անհրաժեշտ անայլն պիտոյնքներ
և ղեղնափնէկական ղեղեր, հիւանդը տեղափոխ-
վեց մի առանձնակի բնակարան: Դեպքը շատ
ստիպողական էր և երկուստայնի եռանդի
շնորհով մի կարծ միջոցում ստեղծվեց խօլէրային
հիւանդների մի ապաստարան: Նոյն ղեղերը այդ-
տեղ տեղափոխվեցան և երկու ուրիշ հիւանդներ,
որոնք նոյնպէս Բագրուից եկողներ էին: Իսկ միւս
օրը, յունիսի 14-ին, երեքի վրա աւելացան եր-
կուսը, որոնք նոյն օրն էլ մեռան: Այսպիսով
պաշտօնապէս հաստատվեց, որ Շուշում մեռած է
զործել խօլէրան: Առ այժմ տեղացիներից ոչ ոք
չէ վարակվել և բժիշկների ամբողջ ուշադրու-
թիւնը այժմ դարձած է այն կէտի վրա, որ կա-
րելոյն չափ առանձնացնեն սարսափելի ակտը, և
չը թոյլ տան, որ քաղաքի մէջ տարածվի: Պէտք
է ասել, որ Շուշում բժշկական օգնութիւն պիտի
հասցնէ միայն քաղաքային բժիշկը, ամբողջ գործը
նրա վրա է ծանրացած. բարեբաղդաբար, Շուշին
ունի մի բարեխիղճ քաղաքային բժիշկ, որ պ.
Բահաթինանին է: Պարտը ջանք ու ճիգ չէ ինա-
յում և արագ օգնութեան է հասնում, ուր որ
շատ թէ քիչ կասկածելի ղեպեր են երևում: Եթէ
չը լինէր նրա եռանդոտ հրաւերը, յորդրանքը,
բարեգործական միջոցներով խօլէրայից հիւանդա-
ցածներին օգնելու անհրաժեշտ գործը զուրկ չը
կայ: Մի խումբ պարոններ այժմ էլ փող են հա-
ւաքում և միջնակ այսօր հաւաքել են մօտաւորա-
պէս 700 ռուբլի. երկուստայնից մի քանիսը
բժշկի ցոյց տուած ծախսերն են անում, հիւանդ-

ներին օգնութիւն հասցնում. իսկ վաճառ սար-
կաւազ Գաղեան օրինակի լինաճաղոճութեամբ
անձամբ խնամում է հիւանդներին: Մեծ եռանդով
գործում է նաև բժշկական Տէր-Գրիգորեան (Թիֆ-
լիսեցի): Քաղաքը մարդկու համար նա ամէն
ջանք է գործ դնում, պ. Բահաթինանի հետ
նայում է հիւանդներին, այցելում է աները, ուր
կասկածելի հիւանդութիւններ են նկատվում:

Նահանգական վարչութիւնը քաղաքի միջոցնե-
րից նշանակել է 2000 ռուբլի քաղաքում խօլե-
րային երկու ապաստարաններ հիմնելու, որոնք
կը բացվին վաղը կամ միւս օրը: Արդէն կազմա-
կերպվել են անսխալական խմբեր, որոնք կաղա-
ված են երկուստայնից և որոնց պատակա-
նութիւնն է հսկել քաղաքի մարդկութեան վրա,
ցոյց տալ ընակիչներին թէ ինչն է օգտակար և
ինչն է վնասակար խօլէրայի ժամանակ:

Մի խօսքով միջոցներ ձեռք են առնվում: Բա-
ւարձր կը լինեն դիմաք սարսափելի հիւրի առաջն
առնելու համար, թէ ոչ, այդ ցոյց կը տալ փողոց:
Առ այժմ քաղաքում հանդարտութիւն է տիրում,
բայց ամէն օր Բագրուից անաղին քանակութեամբ
մարդիկ են գալիս: Բոլոր եկողները խնամում են
քաղաքից դուրս. հիւանդութիւն ունեցող պիտի
փոխադրվի ապաստարանը կամ առանձին
խնամքով պիտի պահվի անհրաժեշտ: Բագրու դա-
տարկվել է և նրա մեծ մասը Շուշի է տեղափոխ-
վել: Նշանակել Շուշում այժմ շատ դժու է: Ամէն
մէկը աշխատում է Բագրուից բերել տալ իր բա-
րեկամին կամ աղաքականին, կարծելով թէ այստեղ
խօլէրայի վտանգից կազաւով ամէն մէկը: Հե-
ռադրատունը միշտ լի է լինում մարդկանցով:

Մարդ, տեսնելով այդ տագնապը, վարակ-
ված տեղերից սկսած այդ անաղին հոսանքը,
կասկածում է թէ կարելի կը լինի խօլէրան ահ-
մանափակել խեղդել սկզբում: Ապագան բաւա-
կան մտայն է երևում: Յաւը նրանում է, որ մեք
աւելի կատարի մաքառում, աւելի անհաշտ պա-
տեղադր հրատարակել ստիպել ակտի դէմ չենք
կարող, որովհետեւ միջոցներ չունենք: Անհրաժեշտ
հարկաւոր է ունենալ, բայց եղածներից, մի
երկու—երեք բժիշկներ, բազմաթիւ ֆէլդշերներ.
հարկաւոր է ղեղնափնէկական ղեղերի մեծ պա-
շար, որ կարելի լինէր ձրի բաժանել չքաւոր
դասակարգին: Շատ բանի կարոտ ենք և այդ
կարոտութիւնը արդեօք մեղ չի պատժել: Հասա-
րակական ինքնօգնութեան դադարաւոր, ինչպէս
գիտեք, բոլորովին մեռած է մեղանում. ամէն
մէկը մտածում է իր կաշու մասին, իսկ ով որ
սեփական կաշին պաշտկու միջոց չունի, այն
պիսին, ի հարկէ, երկխալական միամտութեամբ

պարհը:

—Հաստատ չը ժ ո խ ք ի - մ ո լ է՝ անիծածը,
ինչ լաւ մտածել են—Վարա-Ջէհէննէմ, պատաս-
խանեց ընկերը հետեւելով:

—Խօսելու ժամանակը չէ, համարեք:

Գուրամը Վարա-Ջէհէննէմը լսելուն
պէս չըթողնեցին այնպէս ուղղից, որ քիչ մնաց
տրաքվէին: Իսկոյն մտաբերեց կասկածելի հիւր
դէմքը, ստակաց և այնպէս մոլորված մնաց, որ և
չէր իմանում ինչ ընթացք բռնէր: Երկու օր ա-
ռաջ մոռնախիղճ Վ. Պոլսի բոլոր թաղերում
նորոշուրի ենիչէրի Հիւսէյն-Վոլքէթիւրապի
աղան, մի խմբով ման էր եկել և սպառնացել
որ—ով որ Վարա-Ջէհէննէմին տեսնէր և չիմացնէր
ժամանակին ենիչէրի օջախին, նրան ստով տեղով
այրել: Իսկ իր անխոհեմ տէրը օր ցերեկով հիւրը-
կալում էր իր տանը այդպիսի վտանգաւոր մար-
դու: Քիչ մտածելուց յետոյ Գուրամը մտքումը
ուրախացած, ներս մտաւ, դռները պնդացրեց և
մօտեցաւ ընդունարանի դռներին նրանց խօսակ-
ցութիւնները լսելու: Հիւրը աներկոյթացել էր,
իսկ տէրը անհանգիստ մի անհանալից միւսն էր
մտնում: Գուրամային բակում տեսնելով հարցրեց
Արդի էֆէնդին:

ԲԱՆԱՍԻՍԻ ՐԱԿԱՆ

ՂԱԳԻ

(Պատկեր)

—Դռներուն լաւ հակել, Գուրամ, եթէ կասկա-
ծելի մէկը անցնի՝ հետեւի և տես ուր կը մտնի:
Աչքը բաց, քննի մի քննի....

—Անից կայէք, էֆէնդիս, ձեռ. ծառան
շան հոտաւորութիւն ունի, երկբայ թուող թուո-
չուն անգամ չէ կարող իմ քննութիւններից դեմ
մնալ:

—Քեզի տեսնեմ, տեղն ու տեղը աչք ու ա-
կանջ եղիւ և օդի մէջ թուող արևի ձայնին էլ
հետեւի:—Մի քանի օր էլ համբերել, գործը առաջ
տար, ես քեզ չրաղ կանեմ, վախճան կը ձամբեմ,
մեծ մեծ խոտուկներ տալով դուրս եկաւ: Անա-
տուր. Ղաղաքը Արդի-էֆէնդին իրանց բակից,
Իւսիկը իր խոլերում, Արդեստանի մէջ մի
անմարդկայն փողոցում էր ապրում Արդի-էֆէն-
դին: Աչքերը չորս կողմը չուէր Ղաղաքը բաւա-

կան ժամանակ ղեռնեց նրա ընթացքը և երբ ձայ-
նը չը հանելու չափ հեռացաւ, զուրկ չարժեկով
ասեց.—տառաւոր տարի է, որ ասում ես չրաղ
կանեմ, չրաղ կանեմ,—զեռ պիտի անես: Մաղերս
բո զրանը ձեռնակցուցի, երեսիս վրա քո տուած
չարժարանքները խորշումներ բացվին, մէջքս քո
բռնների տակ կորացաւ, առանց ուճկի, առանց
կուշտ փոր հացի, առանց տաք շորի անցկացրի
օրերս.... Դեռ այդ բոլորը բաւական չէ, ինձ ծաղ-
րում էլ ես.... Բայց ինչ կարող եմ անել, ուժն
իրան կողմն է.... Գուրամը տանջվի, որ Արդին
քէֆ անի: Այժմ թէ մէկ....

Երկար անշարժ, աչքերը պղծած ղեռնուց յետոյ,
սրտի խորքից մի դառն հոգոց քաշեց և տուն
դարձաւ:

Գուրամը մտախոհ էր. որչափ անկողնի վրա
թեք ընկած երեսկայում էր, երբ դուռը բախե-
ցին: Իսկոյն թռաւ և բաց արեց: Գուրամը երբ
սրահայեաց աշխատում էր ինչը այդ անձանքին,
Արդին թեկից քաշեց և ասեց.

—Դուրը կանգնիւր և եթէ մարդ հարցնէ թէ,
որ կողմը դնացին երկու անցորդները—ասա, Վա-
լիդէ Սոլթան ջամիի (մզկիթ) կողմն անցան:

—Հասկանում եմ, գլխիս վրա, էֆէնդի....

խօսելու ճանկերը պիտի ընկնէ։ Կրթված հասարակութիւնը, ի հարկէ, չի վախճի խօսելուց, նա կը մըցէ նրա հետ, մահվան բերանից զոհեր կը խլէ։ Իսկ անկրթը, ետամուր, կոպիտ հասարակութիւնը, յոյսը դրած անբերան զորութիւնների վրա՝ կը կոտորվի, ձեռքում բռնած մատաղի դանակը... Եւստի հասարակութեան անապիտ մեծամասնութիւնը, հէնց այս վերջին դրութեան մէջ է գտնուում։ Զարմանալի, քստմնելի է այն անտարբերութիւնը, որ տիրում է այսպիսի ժամանակին անգամ։ Մեծամասնութիւնը չէ հաւատում թէ մեզ մօտ խօսելու կայ։ ամեն տեղ լսում էք այնպիսի յիմարութիւններ թէ բժիշկներն են ուռնցիում, մեծացնում ամեն մի հասարակ բան, թէ նրանք են չափազանցապէս և թէ Վարդապետի հոգևոր մարդաբանը այնպիսի հրաշալի յատկութիւններ ունի, որ ոչ մի հիւանդութիւն չէ կարող նրան մօտենալ... Մտում է շատ թէ քիչ յոյս զննել երիտասարդ սերունդի վրա։ Երիտասարդութիւնը պիտի կատարէ մեծ գործ, պիտի յորդորէ, հարկադրէ հասկանալ իրերի պարզ դրութիւնը։ Երիտասարդները հրատարակում են բժշկական Տեր-Վրդեանի բրոշյուրան «Խօսելու և նրա առաջն առնելու միջոցներ», որ սպառնում է թիֆլիսում 1890 թվին։ Տպագրվում է 5000 օրինակ և ձրի պիտի բաժանվի։ Բժշկական արդէն հեռագրով տպագրութեան թոյլ տուութիւն է խնդրել։ Այս էլ լաւ միջոց է, որ խաւար ամբոխի աչքերը բաց անել կարող է։

ՆԱՄԱԿ ԴՈՒՅՈՒՆՑ

Յունիսի 17-ին
Մինչ խօսելու մուտքը մեր երկրում համարվում է հաստատ իրողութիւն և շարունակ լրագրողներում կարողում ենք, որ հարկաւոր է և անհրաժեշտ շտապօրէն ձեռք առնել միջոցներ այդ աշխարհաւոր հրէշի դէմ, Նուրիս իրան յատկ անշարժութեամբ և անտարբերութեամբ չէ ուղում ոչ մի միջոցի ձեռնարկել, յուսալով որ այստեղ մուտք չի գործի այդ հիւանդութիւնը։ Եւ գիտե՞ք ինչի վրա է հիմնված այդ գուշակութիւնը, քանի որ Նուրիս հէնց Բագրի թիֆլիսի է դրանում և իր անմարդկայնութիւնների պատճառով, սքլալված չենք լինի, եթէ երկրորդ Միչէլ անուանենք, որը չեղած տեղից անգամ ընդունակ է այդպիսի հիւանդութիւն ստեղծել։ Հարկաւոր է միայն անցնել քաղաքին կից «Ղուրու-չալ» անտանկած տեղը տեսնելու, թէ ինչ սարսափելի անմարդկայնութիւններ և աղբի կոյտեր կան։ մետաքսի բոժոժի մնացորդները և սատակած կենդանիների հոտից անցնել այդ կողմից միանգամայն անկարելի է։ կարծես թէ թէ Լուսոր պոռնիքով հարկաւոր կը լինի չաղ տալ, որ մարդ չը գտայ այդտեղի գաշելի հոտը։ Անցէք քաղաքի փողոցներով, նուրիսից աղբանոցին է դա, տան և բակի կեղտոտութիւնները այդտեղ են չարտում, որ բարեբաղ անձրևները միայն մաքրում են։ այս դեռ հայերի թաղն է. անցէք պարսիկներին, ամեն մէկի տանից, խանութից և նոյն իսկ իրանցից ինչ զգալի, կծու հոտ է բուրում։
Մտնե՛ք այստեղի բաղնիքները, որոնք պատկանում են, առանց բացառութեան, թուրքերին. առատաւորը, յատակը և պատերը ծածկված սպի-

տակ բորբոսով և կեղտով, այն աւաղանը, որ տեղից ջուր պէտք է վերցնէք լուացվելու համար, լի է թուրքերով, որոնք ով գիտէ ինչ տեսակ վէրքերով և վարակիչ ախտերով են վարակված, իսկ բաղնիքի միջի կծու հոտից մարդու գլուխն է չշնում և դուք փոխանակ մաքրվելու, մի քանի հիւանդութիւններով վարակված դուք էք դալիս։

Մտե՛ք չուկայ, ուր դիմում կը տեսնէք դանաճան միջնակներ՝ կուսա, վարունգ, խակ և թիֆուսալոր և այլն, մանաւանդ ամառ ժամանակ հոտած և փչացած, որոնց ուրիշ տեղերում ոչ միայն կը ստիպեն դէն անել, այլ նաև տուգանքի կերթարկեն ծախողին, իսկ այստեղ, այսպիսի վտանգաւոր ժամանակում անգամ, համարձակ ծախում են, չը նայելով ոստիկանութեան հրամային, երբի հսկողութեան թուրքի պատճառով։ Լաւ չէր լինի արեւօք, ինչպէս թիֆլիսում, այստեղ ևս կարգէին թաղական հողաբարձներ, որոնք հսկէին քաղաքի մասերի մաքրութեան, կենսական պիտոյնների և չուկայում վաճառվող հակաառողջական նիւթերի վրա և ի դէպս հիւանդութեան բժիշկ հրաւիրէին, քան թէ թողնէին սեղանական դալլաքներին, որոնք նորից հաւրարար ընտանիքներն են այսօր անարդարացած և դարմանալի է, որ ամենայն օր վերջիններիս ձեռքով զոհվում են մարդիկ, իսկ ժողովուրդը չէ բողբոսում դրանց արարածներին դէմ։ իսկ հասկացողները դրանց դեղձմանքի վրա ուշադրութիւն դարձնող չը կայ։

Խօսելով քաղաքի մի քանի հակաառողջական պայմանների մասին, չէ կարելի ուշադրութեան չառնել և ջրի անմաքրութիւնը, որ ընտելիները գործ են ածում խմելու համար, այդ ջուրը ստացվում է քաղաքի հիւսիսային կողմից հոսող գետակից, որը բերված է քաղաք հողէ (կաւէ) խողովակներով։ Բայց այդ խողովակները շատ տեղ կոտորվելով և համարեա զետի երեսին կպած լինելով ընդունում են իրանց մէջ փոշիներ և դանաճան կեղտոտութիւններ, մանաւանդ անձրև ժամանակ լուծված դրութեամբ, գետին երեսով հոսող անձրևի ջուրը, նրա համեմատութեամբ, մաքուր է, այնպէս որ երբեք դուք Նուրիս չէք գտնի մաքուր ջուր, և ամեն մի նուրիսից արհեստական միջոցներով ստիպված է մասամբ մաքրել, որ խմելու համար պիտանացու լինի։ այդ աղբիները պատկանում են թուրքերին, որոնք հայերի հետ ունեցած ընդհարումների ժամանակ (որը շատ յաճախ է պատահում) արգելում են իրանց ծախող բերած արգելիներից ջուր վերցնել և ծախալի թողնելով՝ վրէժխնդր են լինում։ իսկ յայտնի է՝ թէ կեղտոտ ջուրը որքան նպաստաւոր է վարակիչ հիւանդութիւնների տարածելուն։ Այդ, մինչ ժողովուրդն իր տղիտութեան չորհով և հակաառողջական պայմաններում վարած կեանքով աւելի նպաստում է հիւանդութիւնների տարածվելուն և դարգանալուն, ում վրա պարզ կայ անմիջական հսկողութեան և հողացողութեան խոյ մտածեն և ստիպողական միջոցներ ձեռք առնեն այսպիսի տագնապալից սպասողական դրութեան մէջ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Թիֆլիս, յունիսի 19-ին
Դուք ընթերցողը դարձանայ կարգալով «Արձագանք» լրագրում, որ Ներսիսեան դպրանոցի հողաբարձական նիստի մէջ, որը տեղի է ունեցել ամսին 17-ին, տեսուչ պարոն Սպենդիարեան աղատ է կացուցված իր պաշտօնից միաձայն որոշմամբ։

Այդ հարցը քննվեց առանց ներկայութեան նախագահական իրաւունք ունեցող անձնաւորութեան։ Չը մտնելով քննութեան մանրամասնութիւնների մէջ, որոնք հողաբարձական արձանագրութիւնների գործ են, ես պարզ եմ համարում ասել, որ ստիպված եղայ ձայն տալ տեսչի արձակելուն՝ միայն ի նկատի ունենալով, որ այժմեան հողաբարձական կադմակերպութեան մէջ, տեսուչ պարոն Սպենդիարեան բացի վնասից դպրանոցին օգուտ տալ չէ կարող, որովհետեւ նա աղատ օրէն գործ է չէ կարող անում, հետեւաբար նրա ցանկութիւնը, նրա ծրագիրը միշտ անկատար պիտի մնան, մինչդեռ նա ուսումնական մասի համար պատասխանատու միակ անձնաւորութիւնն է։

Հարկ եմ համարում աւելացնել և այն, որ իմ դէպի պ. տեսուչը ունեցած վստահութիւնը, ինչպէս անցեալ երեք տարին, մնում է նոյնը և այսօր։

Հողաբարձու Ա. Մէլլե-Ազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Բօրժօմ, 15 յունիսի

Թող տուէք այս երկտող դրութիւնս դետեղել ձեր պատուական լրագրում ի դիտութիւն ընթերցող հասարակութեան։

Շատերը դիմում են ինձ նամակով խմանալով թէ «Մանկավարժական գրադարան» վերնագրով ժողովածուն երբ լոյս կը տեսնի և թէ այդ վերջինի հրատարակութիւնը ինչու այդքան ուշացաւ։ Զուտաւ է որ մեզ մօտ ոչ մի գրականական երեւոյթ իր խոստացած ժամին լոյս չէ տեսնում և ես նոյնպէս, ինչպէս շատերը, վճռել էի կուէլ դրա դէմ, սակայն հանդիպելով խոյր արգելքներին՝ ստիպվեցայ հին ուղիով ընթանալ։ Հետեւեալ հանգամանքները ստիպեցին ինձ «Մանկավարժական գրադարան» հրատարակութիւնը ուշացնել, առաջին՝ յարգելի աշխատակիցներս իրանց յօդաւանդը շատ ուշացրին, նոյն իսկ շատերը առաջին հատորի համար խոստացած յօդաւանդները սպասելով և ոչինչ չը ստանալով, ստիպված էի մի ուրիշին դիմել, կամ ինքս աշխատել այդ պակաս յօդաւանդ տեղ ուրիշը դետեղել։ Երկրորդ՝ բաժանորդագրութիւնը շատ դանդաղ էր առաջ գնում։ մինչև այսօր ես շատերից բաժանորդագրութեան թիւերը չեմ ստացել, չը նայելով որ քանիցս անգամ դիմել եմ նրանց նամակով։

Վերջապէս «Մանկավարժական գրադարան» առաջին հատորն արդէն տպարանից դուրս է եկել և այս ամիս կուղարկվի յարգելի բաժանորդներին։ Լիայոյս եմ, որ միւս հատորները աւելի ձուռ պէտք է լինեն և նրանց հրատարակութիւնը առաջինի նման այդքան չուշանայ, ըստ որում

ընթացքում այս առաջին անգամն էր, որ տեղը խմանալով եր իր առաջ, այս առաջին անգամն էր, որ բռնազաւր՝ Արդին ընկել էր իր ճանկեսութեան մէջ։

Ախար, այդպէս հեռանալ չի լինի, ուղում ես գնալ վախենում ես, Աստուած քեզ հետ։ Բայց այնպէս արա, որ այն աշխարհում ես քեզ պարտաւոր չը մնամ։ Ես քու ծառայութիւնից այնքան գոհ էի, որ տանութիւնս արի է քեզ բաց չը թողի։ Քեզ պէս հաւատարիմ, ով է իմանում, էլ կարող եմ գտնել թէ ոչ։ Ասա, ինչ որ խնդրես՝ մերժում չես ստանայ։ Քո այնքան աշխատութեան վարձ, ես պատրաստ եմ բոլոր ցանկերով խնդրելու կատարել։

Չեմ առողջութիւնը և հովանաւորութիւնն եմ ցանկանում, ձեր չքի տակ որ լինեմ, էլ ինձ ինչ կը պակասի։

Այլա՛ն անուշով երգում եմ, ուղիւ և վստահ եղիւ, որ կը ստանաս ցանկացածդ։

Բացի քու փառաւորութիւնից, ոչ մի ցանկութիւն չունեմ։

Ասա, հայրենիք ես գնում, ազարակ, այդի, անտաւ, կաք, կայանք, փող, ինչ որ ցանկանում եմ

խմադրութիւնը աւելի կանոնաւոր կերպով պէտք է տեղի ունենայ, մանաւանդ որ կունենայ խմադրական ժողովներ բարկացած բանիմաց պարսններից և օրորոններից։

Վերջացնելով երկտող դրութիւնս, խնդրում եմ այն պարսններին, որոնց ձեռքին գտնվում են «Մանկավարժական գրադարան» բաժանորդագրական թիւերը, թող շտապօրէն հասցեն ինձ հետեւեալ հասցեով. Боржом, Иоаннесу Бархуда-риantz, дача садовника Гавриила.

Յովհաննէս Բարխուդարեանց

ՆԵՐՏԻՆ ԼՈՒԿԵՐ

Տեղական ուսուցիչները հաղորդում են, որ մի քանի օրից յետոյ երկրիս կառավարչապետ, գեներալ Շերեմետեւ ուղևորվում է Բագու։

ՆԵՐՏԻՆԻՑ մեզ գրում են. «Այս տարի Ներսիսի գիմնադպիցի աւարտեցին և հասունութեան վկայական ստացան տասն և երկու հոգի աշակերտներ։ Այդ 12-ից հայերը 8 հոգի են, վրացիք՝ 2, ուսու 1 և թուրք 1. Հայերից բոլորն էլ կամենում են շարունակել իրանց ուսումը բարձրագույն դպրոցներում՝ մին առտաստանում, իսկ միւսները Ռուսաստանի համալսարաններում։ Եւրոպականութեան արժանի են տեղիս բարեկարգները՝ Առաքել Աֆրիկեան և Համբարձում Եղիազարեան, որոնք նիւթապէս նպաստում են շունեւ աշակերտներին իրանց ուսումը շարունակելու։»

ՆԵՐՏԻՆԻՑ մեզ գրում են. «Քաղաքային վարչութիւնը պարտաւորութիւն է տեսնում դալի խօսելու տարածմանն առաջն առնելու։ Պատրաստական ծախսերի համար քաղաքային վարչութիւնը վերցրեց տեղիս վաճառական Գէորգեանից՝ 20,000 ռուբլի։»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Խօսելույով հիւանդանալու դարձեալ երկու դէպք է եղել այս գիշեր։ Դրանք Բագուից եկածներ են. հիւանդացի են ճանապարհին և քաղաք հասնելու պէս բերվել են նոր բացված հիւանդանոցը (ХОЛЕРНЫЙ ПУНКТ)։ Բոլոր հիւանդացիները Բագուից եկածներ են, բացի մէկից, որը մի քանիսց է և որը հիւանդացի է, թաղելով խօսելույով մտած մէկին, որի մասին բժիշկները տեղեկութիւն չեն ունեցել։ Վերջինս նոյնպէս Բագուից եկած է եղել։ Ասում են, որ խօսելույով վարակվածներ կան և Զերթոյցիլ գաւառում, ուր փակել են Պարսկաստանից։ Վերս մուտքանք ասել, որ վարակվածները բոլորն էլ հայեր են և ստոր դասակարգից։ Պ ու լ կ ու ը բացվել է քահանայի հիւանդանալուց յետոյ և պահվում է ժողովուրդից հաւաքած փողերով։ Խօսելույով դէմ կուէլու համար առ այժմ կան միայն երկու բժիշկ։ Քաղաքում կան մի քանի բժիշկներ, բայց դրանք վարձված չեն, փող չը լինելու պատճառով։ Դեղատաններում ամեն ինչ կրկնապատիկ, եռապատիկ գնելով են վաճառում։ Բագուից անդադր փակվում են դէպի մեր կողմերը։ Քաղաքը խիստ անմաքուր դրութեան մէջ է գտնվում։ Տեղիս երիտասարդութիւնից կազմվել են սանիտարական

ես, գիտես որ կարող եմ սուլթանի հրովարտաւոր քեզ վրա հաստատել տալ...»

Ոչինչ պէտք չէ, բացի ձեր հովանաւորութիւնը և եթէ կը բարեհաճեք, նշանակեցէք ինձ ձեր իշխանութեան տակ գտնված Անատոլի-աշխարհի մի անկիւնում իմ ծննդավայրը—Մուշ քաղաքում դադի...»

Ախար, դու գրել, կարգալ չը գիտես, ես քեզ ինչպէս դադի նշանակել տամ...

Որ ուղենաք, կարող էք, մի բան կանեմ, ես կը տանեմ։ Այնքան թուրք մրտադներ կան, որ նրանցից մէկին կը դիմեմ...

Այ մարդ, այնպէս բան ես խնդրում, որ ես չը գիտեմ ինչ պատասխանեմ։ Պատրաստ եմ երդումս պահպանելու համար, ցանկութիւնը կատարել, բայց...

Մի փախենաք, վստահ եղէք ինձ վրա, ես չեմ թող տայ, որ իմ պատճառով որդիւմս տեղիս կարմիր...

Էլ ճարս ինչ, լաւ, ես քեզ էդուց կը բերեմ Եկեղեցի-Խալապից բերանը, ճանապարհ կը ձգեմ։

Աստուած հաստատ պահէ ձեզ։

(Կը շարունակվի)

—Դու ինչի ներս եկար։
—Երկու երկաթի անցան և հարցրին Ղարա-Ջէ է հէննէ մին։
—Մուս, լոբր, ձայնը...
—Ինչի էք նեղանում, ես նրանց ուղարկեցի դէպի ցած։
—Գնա, դրանք սպասիւր և եթէ մի անակնկալ դէպք պատահի՝ զանգակի դուանը քաշիւր։ Ախար... ախ... երբ պիտի դու մարդ դառնաս, բան հասկանաս։ Այս արձանին էլ որ անցկացնենք, ես քեզ չարա պիտի անեմ։
—Եթէնդի, ես էլ չեմ կարող մնալ այս տանը, վախենում եմ, երկաթիները ինձ սպառնացին։ «Ղարա-Ջէ հէննէ մին» անունը որ տուին, ես ստակացի։ Ես կը փախեմ, նրանք որտեղ որ են, հիմի կը վերադառնան։
—Յիւնք, քնա գործիդ, քեզ ինչ պիտի անեն, ես կը թողնեմ, որ քու մի մազին դիպչեն։
—Եթէ դուք նրանց տեսած լինէք, պղպէս հեշտ հեշտ չէք լսուի։ Ղարա-Ջէ հէննէ մին համար կը վառեն ձեզ անով տեղով...
—Գնա, որդի, քնա, դրանք սպասէ, ես ինչ որ քեզ ասում եմ, լսէ...։ Այս երկու օրս էլ

սպասէ, քեզ չարա կանեմ, ինչքան որ փող կուգես, կը տամ, կուղարկեմ հարցնիք։

—Կեանքը, էֆէնդի, քաղցը բան է, վախը ինձ ստակացնում է, ես չեմ կարող մի վայրեան էլի մնալ ձեր օջախը, հալալ արեք կերած հացս, օրհնեցէք ինձ... Ասելով դուրս եկաւ բակից Դուրսանը։

Բայց այս դէպքում երկուդը տիրեց Արդի է-ֆէնդին, նրա մտքից մի անկնթաղութեամբ հաղարու մի բան անցաւ։ Դա կապվածում էր, որ խուրանակ ծառան կարող էր գնալ և իրան մասնել։ Բաւական էր, որ իմանել թէ՛ Արդին հիւրընկալել էր Ղարա-Ջէ հէննէ մին։ Այս միտքը այնքան սաստիկ աղբը Անատոլի-Ղաղաքի վրա, որ նա դուրս թուաւ և սկսեց կանչել։

—Դուրսան, Դուրսան, Դուրսան։
—Հրամայեք, էֆէնդի, ասեց հեռուից եւ դաւանալով դռնապանը։

—Եկ, եկ, ծառայութեանդ վարձը տամ, եկ դու էլ հալալ արա ինձ քո աշխատութիւնը, յետոյ քնա։

Դուրսանը կամայ կամայ քաշելը եւ դարձրեց տան կողմը։ Տասնութը տարվայ աշխատանքի

խմբեր, անհրաժեշտ է միայն հակելու համար։

ԿՈՅՈՐ ամառանոցից մեզ գրում են հետևեալը։
«Այս տարի Կոյորում ամառանոցաւորները մեծ բազմութիւն կայ։ Գրեթէ բոլոր տները բնակեալ են։ Տեղիս վարչութիւնը, աւելի քան ուրիշ տարիներ, հոգում է աւանի մաքրութեան մասին։»

Մեզ գրում են ԱԼԷՔԱՆԴՐՈՊՈԼԻՑ որ այդտեղի հայոց ծխական երկուսու ռուսաւորանների հարցաքննութիւնները արդէն վերջացել են, բայց ընդհանրապէս գոհացուցիչ չէին։ Լուսն էր, աւել լայնում է թղթակցել, որ ռուսացական խումբը պիտի փոփոխութիւններին ենթարկվի։

ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅ գիւղից մեզ հաղորդում են, որ այս տարի ամառանոց եկողները ոչ թէ միայն Գիւլիսի, բայց և Քարվանսարայ՝ խիստ շատ են։ Թղթակցին ասում է որ այս տարի հունձը առատ է լինելու։ Ծրերը այդտեղ էլ սաստիկ էին։

Լուսն էր որ Թիֆլիսի թեմական առաջնորդ, Մամբրէ եպիսկոպոսը, այս ամառը գնալու է Կոյոր՝ օգտփոխութեան համար։

Բարբառայի Բուշչուկ քաղաքից ստացանք մի նամակ հետեւեալ բովանդակութեամբ։ «Քաղաքին հայոց մէջ ընթերցասիրութիւն ծաղկում համար ընկերութիւն է կազմել և մի ընթերցարան է բացվել, այդ ընկերութեան վարչութիւնը գլխավոր է խմբագիրներին, հեղինակներին և առհասարակ ազգայիններին, որ հաճեն քաջաբերել այդ նոր ձեռնարկութիւնը իրանց նուէրներով, որի համար ընկերութիւնը կանխաւ մատուցանում է իր խորին շնորհակալութիւնը։ (Ընկերութեան հասցէն. «Boustchouk (Bulgarie) Bibliothèque Armenienne.»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են հետևեալը։ «Եւրախից սկսած մինչև Շուշի, խմորդին կարծես թէ Թիֆլիսի Գոյօլիսի պրոսպեկտ է ներկայացնում։ Ուտով, ֆուրջօններով փախում են մեր կողմերը Բագուի մշակները, և շատերը դրանցից ճանապարհին արդէն թողնում են իրանց դիակները։ Գիւլիսի ընկերները թաղում էին ճանապարհի վրա, որ դան յետոյ տանին։ Մշակները ուղևորվում են Շուշիով և այլ ճանապարհներով դէպի Ջիբրայէլի և Չանդեզուրի գաւառները։ Շուշու դիրքը կարող է փրկել մեզ սաստիկ խօշորայից։ Խալ ինչ կը վերաբերի գաւառներին, Աստուած ազատ է թէ ինչ կը լինի, քանի որ երկու երեք ամիս առաջներս ունեցի։»

Թիւրքաց կառավարութիւնը նախագահութեան միջոց է ձեռք առել, Տրապիզոնում հիմնված է կառնտինի բաժնումից գնացողների համար։

Մեր լրագրի մէջ արած առաջարկութիւնը արձագանք է գտել Շուշիում. այնտեղի երկրաւորներին մի խումբ յանձն է առել տպագրել ժողովրդի ընթերցանութեան համար խմբագրած բժշկական ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «Խօշոր» և նրա առաջին աւանդը միջոցների գրեթէ չէ։ Գրքը թղթի պէտք է տպարկի 5,000 օրինակ և ձրիաբար տարածվի ժողովրդի մէջ։ Դնորհակալութիւն այդ գեղեցիկ գործը կատարողներին։

Կիւրակի, յունիսի 21-ին, Թիֆլիսի վանքի մայրեկեղեցում տեղի ունեցաւ ութ քահանայացուների ձեռնադրութիւն։ Հանդէսին ներկայ էր մեծ բազմութիւն։

Մեզ գրում են Չանդեզուրի Գեօրիս աւանից, որ Բագուից բազմաթիւ մշակներ են վերադառնում Չանդեզուրի գիւղերը։ Վտանջ կայ, որ Չանդեզուրում էլ խօշոր կը տարածվի։ Գաւառացիները զինուով նահանգապետին խնդրել է թիւրքու կայարանում կարանտին հիմնել Բագուից եկողների համար։

Պաշտօնապէս հաղորդում են, որ Զաքարիայում խօշորայի դէպք է եղել Բագուից եկածների հետ։

Յունիսի 12-ին, որպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, Պետերբուրգի միջով անցան Քրանս-ալթերիական ընկերութեան ներկայացուցիչները, որոնց պարագլուխն է յայտնի ձեռնարկող Մոնի, զինուով դէպի Կովկաս. դրանք նպատակ ունեն նրան քաղաքի շրջակայներում մի յարմար

տեղ գտնել բամբակի պլանտացիաներ զարգացնելու և ամէրիկական սերմի բամբակ ցանկելու համար։

Յունիսի 11-ին, որպէս հաղորդում է «НОВ. ОБОЗРЕНИЕ» լրագիրը, Մեծ-Թիֆլիս գիւղում մեծ կարկուտ է եկել և ոչնչացրել է 400 դէսիատի-նից աւելի տարածութեան վրա եղած ցանքերը։ Վնասը ասում են, հասնում է 20,000 ռուբլու։ Բագուից Թիֆլիս եկողներին երկաթուղու կայանից և եթ տանում են արդիւնական քաղաքամասերը բժշկական քննութեան ենթարկելու համար, որից յետոյ նրանց ազատ են թողնում։ Վերահսկողութիւն է նշանակվում նոյնպէս նրանց բնակարանների վրա։

«Каспий» լրագիրը հաղորդում է, որ յունիսի 16-ին «АНГЛИЧАНИНЫ» նաւով Բագուից Լեւորոսում ուղևորվեցան 450 պարսիկներ։

Նոյն լրագիրը հաղորդում է, որ յունիսի 18-ին գնացող երկաթուղական գնացքում, Հաջիկաբուլ և Ալիստի կայարանների մէջ, մի կին ծնեց։ Բոլոր ճանապարհորդները փախան ուրիշ վագոնները կարծելով թէ դա խօշորայով հիւանդ է։ Լաւ է, որ մեքենայից երկուսուներից չէր և յանձն առաւ մանկաբարձուհու դերը։

«Каспий» լրագիրը լսել է, որ ի նկատի առնելով Բագուին հասած դժբաղդութիւնը, Բագուի առևտրականները շատերը գիտաւորութիւն ունեն դիմել ֆինանսների մինիստրին, խնդրելով միջոցներ, որ ժամանակ տրվի իրանց մուրակներով տուրք պարտքերը վճարելու։ Իրանց խնդիրը մէջ նրանք մասնագիտ չեն անում այն բանի վրա, որ տարածված սարսափի պատճառով, քաղաքի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը փախել է և փակում է զանազան կողմերը, և առևտուրը բոլորովին կանգնել է, այնպէս որ իրանց բերել սուսած ապրանքը այնպէս էլ մնում է, գնորդներ չը լինելու պատճառով, իսկ վճարելու փող չը կայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԼՐԱԳՐԻ ԽՓԱՆՈՒՄԸ

Յայտնի է, որ քանի մի ժամանակ սրանից առաջ Պարիզում սկսեց լոյս տեսնել մի հակաթիւրք լրագիր, Փրանսերէն լեզուով «La Turquie libre» (Ազատ Թուրքիա) վերնագրով։ Այդ լրագրի խմբագիրն էր զանազանի պ. Ժիւստէն Մարէնքօ ազգանունով։ Այժմ լրագիրները տեղեկացնում են, որ Փրանսիական մինիստր Կոնստանի հրամանով պ. Մարէնքօ Ֆրանսիայից արտաքսված է և լրագիրը խախտված։ Այժմ պ. Մարէնքօ Անգլիա է անցել և այնտեղ է շարունակում իր հրատարակութիւնը։

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Սարգստար, 4/16 մայիսի

Վերջին ժամանակներս Սարգստարը ընդունված է խորասանեան նահանգի վաճառականութեան կենտրոն, ուր հեռուոր տեղերից, ինչպէս Հերաթից, ներմուծում են զանազան բեքեր։

Այստեղ են վաճառականութիւնը հայերի ձեռքումն է, որոնք Ռուսաստանից բերելով մեծ քանակութեամբ զանազան ապրանքներ՝ փոխարէնը արտահանում են բուրդ, բամբակ և այլն։ Թէպէտ վերջերս ծխախոտի բէթին հակառակող յեղափոխականներից աղատ էր տեղա, բայց բամաղանի ծովապահութեան ծէսը գրգռեց մի սպահանցի չէյիսի մուրաւորութիւնը, որով պէտք էր մեծ ժողովրդականութիւն ձեռք բերել՝ իր կարծիքով, բայց, ընդհակառակն, ահա ինչ պատահեց։ Ամեն տարի տեղի հայերը սովորութիւն ունեն զատիկ տօնը քաղաքից դուրս մի այգում կատարել. այս պատճառով մի գրութիւնով խնդրում են տեղիս մեծ մուշտայիդ Աղա-Հաջի-Միլլա-Իբրահիմից մի երկու օրով նրա այգին և պատասխան ստանալով են հետեւեալ գրութիւնը. «Թէպէտ ուրիշները համար իմ այգու դռները փակ են, բայց հայերի համար միայն բաց են. նրանք ազատ կարող են մուտք գործել։ Այդպէս ինչ էլ պատուիրում է, որ հայերին ոչ մի բանով արգելք չը պատահի։ Հէնց սրանից դրեւած յիշեալ սպահանցի չէյիք, ապրիլ ամսի 7-ին (19-ին) իրանց իմած Գուսէ-նի սպանման օրը, հանգամանքից օգուտ քաղելով,

մղկիթում բարձրանում է ամբիւն և քարոզում, թէ. «Զէ որ մեզ օրէնքով արգելված է հայերի հետ յարաբերութիւն ունենալը, բայց այսօրվայ սուրբ օրը ոչ թէ հայերից խորշում ենք, այլ, ընդհակառակն, մեր մեծերը իրանց այգիները տալիս են, որպէս ուրախութեան տեղ»։ Բացի սրանից, մի քանի աննպաստ խօսքեր է ասում, թէ Աղայի և թէ հայերիս մասին։ Իսկ ժողովուրդը լաւ ճանաչելով թէ մեծ մուշտայիդին և թէ հայերին, այսպիսի անվայել ամբաստանութիւնները լսելով, կատարաբար յարձակվում է, ամբիւնը խորտակում և իրան չէյիսին մահ սպառնում, որից մի կերպ ազատվելով, ապաստանում է Բաստ։ Իսկ մեծ մուշտայիդ Աղան այս լսելով ծիծաղում է չէյիսի արած յիմարութեան վրա և ապա պատասխանում ներկայ եղողներին. «Զէ որ եթէ ես արեւած լինէի հայերին իմ այգիս մտնել, այն ժամանակ իրանց քարվանսարաններում կատարած կը լինէին իրանց տօնը, մանաւանդ որ հայերի քարվանսարանները հարեան են մեր մղկիթներին և իմամ-Ջաղին (ուստատեղի է), և իսկոյն հրամայում է, որ այն չէյիսի քաղաքից բոլորովին հեռացնեն։ Ահա այսպիսի թիւրակարծիք մուրաւոր չէյիսին են, որ պատճառ են դառնում մահմէտական ժողովրդի գրգռման և վնասին։ Բայց ցանկալի էր, որ Պարսկաստանի բոլոր քաղաքները այսպիսի մուշտայիդներ ունենային, որոնց չը նորոյով քրիստոնեաները հանգիստ կեանք կը վարէին։

Հայերի դէմ անաշուղ գրգռութիւնից մի քանի շարաթ յետոյ, վերջապէս այդ չէյիսին աշուղեց ժողովրդին գրգռել Բագուի աղանաւորները դէմ։ Հինգ օր խանութները և ամբողջ շուկան փակ էին. ամբողջ դիւանի մարդիկանց հետ միասնաբար աշուղած են բռնել տան և մէկ բարիական պարսիկներ, որոնք մեծ մասը վաճառականներ են։ Մէջէդի ուսաց հիւպատոսարանը լաճին պէս պաշտպանութիւն ցոյց տալով բարենկերին, իսկոյն պահանջում է, առարկելով, թէ բռնվածները ուսահանգամաններ են, որով և ճանապարհեցին։

Ազգայնաստի խօշորայի մասին լուր չը կայ։ Այժմ կենդանիների մէջ էլ է տարածված մի տեսակ տարափոխիկ հիւանդութիւն, մանաւանդ ոչխարների մէջ։ Ռուս կառավարութիւնը այժմ մանից խորասանում զգուշական միջոցներ է գործ դնում. Մէջէդի ուսաց հիւպատոսը և երկու բէթիներ խորասանի նահանգից տեղեկութիւններ են հաւաքում։ Առ այժմ արգելված է Անդրկասպեան երկրով բուրդ արտահանելը. ճանապարհած բուրդերը սահմանից վերադարձնում են. ասում են, որ եթէ խօշորայի նշույնները հաստատուին, այն ժամանակ ուսաց կառավարութիւնը կարանտինի պիտի ենթարկէ բոլոր ապրանքները։ Այս պատճառով, այժմանից գործերը դրութիւնը վատանում է, առևտուրը ընկած է, հայ վաճառականները տատանման մէջ են, որոնք առաջուց մեծ գումարներ են բաժանած բրդի համար։ Եթէ այս լուրը հաստատվի, եւլ չը կայ։ գնված բրդերը պէտք է պահել մինչև կարանտինի վերջնելը, որից մեծ վնասներ կարող են հանել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Կ. Պօլսի դիպլոմատական շրջաններում խօսում են, որ գերմանական դեսպան Բաղդից աշխատում է համոզել սուլթանին այցելութիւն գործել Վիլհելմ կայսրին, երեք տարի առաջ այդ վերջինի արած այցելութեան փոխարէն։ Սուլթանը պատասխանեց, որ օսմանեան պալատի աւանդութիւնները չեն թոյլատրում իրան արտասահման գնալ և այդ պատճառով շատ ցաւում է, որ չէ կարող կատարել իր անձնական ցանկութիւնը։ Սուլթանը վճռեց Բերլին ուղարկել իր առաջին թիկնապագ խօբէ-փաշային՝ իր ցաւակցութիւնը յայտնելու և մի և նոյն ժամանակ Կ. Պօլսի այցելութեան ժամանակ Վիլհելմ կայսրին ուղեկցող անձանց մեղաւոր տալու ի յիշատակ այդ այցելութեան։

—Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են, որ անաւորական կողմից թիւրքաց մայրաքաղաքը նկատելի կերպով բարեբաղլ է, և այդ հանգամանքի նորոյով մահվան դէպքեր անցեալ տարվանից սակաւ են լինում։ Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը, այսինքն մի ամսվա ընթացքում, մեռել են ընդամենը 859 հոգի, որոնցից տարափոխիկ հիւանդութիւններով (ժողկով) մեռել են 11 հոգի։ Անցեալ տարի այդ մի և նոյն ժամանակ մեռողները 11 պրօցէնտով աւելի էին, և

ժողկից մեռան 42 հոգի։ Հիւանդութիւնների այդ պակասումը պէտք է վերադրել քաղաքային իշխանութիւնների և մանաւանդ սուլթանի ջանքերին, որը շատ վախճում է Պարսկաստանում տարածված խօշորայից։

—Խաղաղական լրագիրները հաղորդում են, որ յայտնի ողբերգու էրնէստօ Բոսսի ցանկանում է պարլամենտի անդամ դառնալ։ Առաջիկայ ընտրութիւններին խաղաղում նա դնում է իր կանգնուողը։ Եթէ նա ընտրվի, առաջին անգամ կը լինի, որ դերասանը եւրօպական պարլամենտի անդամ կը դառնայ։

—Լօնդոնից «Figaro» լրագրին հաղորդում են հետևեալը. «Հաւատացնում են, որ Վիլհելմ կայսրը վճռել է Անգլիա գնալ։ Ասում են, որ այդ ճանապարհորդութիւնը անում է Վիլհելմ կայսրը խաղաղական թագաւորի համաձայնութեամբ։ Այստեղ հաւատացնում են, որ երկու միապետները նշանաւոր վճիռներ են կայացրել և որ գերմանական կայսրի ճանապարհորդութիւնը կարող է նշանաւոր հետեւեցնել ունենալ։

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիս։ Հրատարակված է վճիռ՝ բողոքական դաւանութիւնների մտորեական գրքերը ուսաց լեզուով դրել։—Աստարիսան 12 ֆուտային նաւակայարաններում Բագուից գնացող ճանապարհորդների կուտակման պատճառով և վախճանով որ խօշորան Բագուից Աստարիսան չը տարածվի, երթեկները այդ երկու քաղաքների մէջ դադարեցրած է, մինչև որ Պետրօվսկում վերջնականապէս չը կազմակերպվի եօթօրեայ կարանտին. մի և նոյն ժամանակ սահմանաւան հսկողութիւնը ուժեղացրած է Բագուից ցանաքային ճանապարհով դուրս եկողների համար։—Յունիսի 8-ին 9 ֆուտային նաւակայարանում բռնվել են 53 հիւանդներ, մեռել են 6. Աստարիսանում հիւանդացողներ չը կան։ Թիֆլիսում և Պետրօվսկում հիւանդութիւնների մի քանի դէպքեր եղան Բագուից եկողների մէջ, բայց ոչ տեղական բնակիչների մէջ։ Բագուում յունիսի 16-ին կրկին հիւանդացողներ մտան 39, մեռան 56, առողջացան 8, մնում են 118։ Թուրքեստանի երկրի Ջիզակում հիւանդացողներ մեռան 11, բժշկական բաժնիներից դուրս տեղացիք Ջիզակում մեռան 99, Ուրբենսկայա վոյստում—125, Բալաստսկայա վոյստում—135։

ՊԱՐԻԶ, 19 յունիս։ Մինիստրների խորհրդում Բուլիէ հաղորդեց, որ եկամտաները 1891 թվին աւելացել են 83,990,000 ֆրանկով։

ԼՕՆԴՈՆ, 19 յունիս։ Գլաւստօն մի ճառ արտասանեց Էլքիսթրօն, որի մէջ անց թէ ինքն պաշտպանելու է 1886 թվին իր առաջարկած նաւակիթը իրաւական բաժնիներից դուրս տեղացիք Ջիզակում մեռան 99, Ուրբենսկայա վոյստում—125, Բալաստսկայա վոյստում—135։

ՄԱԴՐԻԴ, 19 յունիս։ Սանիտարական խորհուրդի առաջարկութեամբ, բժիշկների յանձնաժողովը կերթայ Ռուսաստանի զանազան տեղերը խօշորային էպիդեմիան ռուսաւորանելու համար։

ՍՕՖԻԱ, 19 յունիս։ Երէկ սկսվեց Բէլգիկի պաշտօնական մէջ մեղադրվող անձանց դատը։ Մեղադրվող Միլարով խոստովանեց, որ ինքն դիտաւորութիւն ունէր սպանել պրինց Ֆերդինանդին։ Պօպով յայտնեց, որ ինքն, վասիլեկ Մուսնիլի և Միլարով երգուցին իրանց կեանքը դոհել պրինցին սպանելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունիս։ Մինչև յունիսի 15-ը հեռագրական տեղեկութիւնները պետութեան բոլոր տեղերի հունձները մասին սփռվել են. այն նահանգներում, ուր կատարվում էին հունձի լաւ լինելու մասին, անձրևների պատճառով, եթէ ոչ ամեն տեղ և իրապէս, հունձը լաւացաւ. ընդհանրապէս նախատեսվում է, որ հունձը կը լինի ոչ պակաս միջակից։—Կարգադրված է, որ ժամանաւորապէս արգելվեն այն նաւերը, որոնք Աստարիսանից դէպի վեր են գնում, և թող տալ, որ նրանք շարունակեն ճանապարհը՝ պահպանելով այն բոլոր նախազգուշութիւնները, որոնք սահմանված են խօշորային ժամանակների համար։

Յունիսի 18-ին Աստարիսանում խօշորայով հիւանդացան 8, մեռան 3։ Բագուում յունիսի 17-ին հիւանդացող մտան 46, առողջացան 6. մեռան 20. մնում են 138. հիւանդացողից դուրս մեռան 25.

Թիֆլիսում յունիսի 17-ին մեռան 2. հիւանդանոց
մասն 2. բնակարանները լիովին դեղինֆեկցիայի
են ենթարկված: Պետբուկուստ տեղացիները չեն
հիւանդանոց, բայց Բազուկից նաւերով եկածները
հիւանդանոց մասն 16. մեռան 7. մի քանի դէպ-
քեր եղան Շամախում և Շուշում: Արքունական
երկաթուղիների վարչութիւնը յայտարարում է,
որ ապրանքատար և մարդատար զննչները Ան-
դրկովկասեան երկաթուղային գծով մինչև այժմ
էլ երթնելում են անընդհատ կերպով՝ ամբողջ
տարածութեան վրա՝ Բազուկից մինչև Բաթում:—
Յունիսի 19-ին Աստրախանում էլի 4 հոգի հի-
ւանդացան, մեռան 1. Բազում առանձին փոփո-
ւորութիւններ չը կան: Թիֆլիսում յունիսի 19-ին
հիւանդացան 5. մեռան 2. Ասխարադ առում
յունիսի 18-ին տեղի ունեցան հիւանդութեան և
մահվան դէպքեր:

ՇՏՈՒՏԳԱՐԻ, 21 յունիսի: Երէկ թագուհի Շար-
լոտայի դրօշման փառանակ, կառքի ետեւի ա-
նիւր կոտորեց. կառքայնը վայր ընկաւ. ձիանե-
րը փախան. թագուհին կառքի մէջ ծնկները վրա
կանգնելով՝ բռնեց սանձը և ձիերին կանգնեց-
րեց: Թագուհին վնաս չը կրեց. կառքայնը թե-
րեւ վերջ է ստացել:

ՊԱՐԻՅ, 21 յունիսի: Մինիստրական խորհուրդը
սկզբունքով ընդունեց, որ Պարիզում 1900 թվին
բացվի համաշխարհային ցուցահանդէս: Պատգա-
մաւորների ժողովը նկատողութեան առաւ միա-
մարտները արդիւնէւ առաջարկը:

ԲԵՐԼԻՆ, 21 յունիսի: Աղբիւրիկ շրջաններում
քննվում է հետեւեալ հարցը. հարկաւոր չէ արդեօք
Փրանսիական մրցումը ոչնչացնելու համար՝ Բեր-
լինում համաշխարհային ցուցահանդէս կազմել
1898 կամ 1899 թվին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 19-ին

Լոգոնի վրա 10 ֆունտ արծէ	99	ր.	40	կ.
Բերլին վրա 100 մարկ	48	ր.	65	»
Պարիզի վրա 100 ֆրանկ	39	»	45	»
Ոսկի	8	»	—	»
Մարաշի կուպոններ	159	»	—	»
Արծաթ	1	»	04	»
Բորսայի դիսկոնտո	4	»	51/2	»
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	103	»	87	»
— — — — — 2-րդ	103	»	12	»
— — — — — 3-րդ	—	»	—	»
— — — — — 4-րդ	—	»	—	»
— — — — — 5-րդ	—	»	—	»
— — — — — 6-րդ	102	»	75	»
6% ոսկեայ բէնտա	161	»	—	»
4% ոսկեայ փոխառութիւն	—	»	—	»
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	»	—	»
— — — — — 2-րդ	102	»	75	»
— — — — — 3-րդ	104	»	75	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	240	»	50	»
— — — — — երկրորդ	220	»	50	»
Պետական երկաթուղային բէնտա	104	»	—	»
5 1/2% բէնտա	—	»	—	»
4% ներքին փոխառութեան	95	»	12	»
5% դրաւ. թղթ. աշխ. կալ. բանկի	102	»	25	»
Ազն. կալ. բանկի խաղարկութեան	—	»	—	»
Գրաւ. թղթ.	193	»	50	»
5 1/2% վկայակ. դիւղ. հող. բանկի	104	»	50	»
4 1/2% դրաւական թղթեր կարգաւ.	—	»	—	»
— — — — — փոխ. կրքիւտ. ընկեր. մետալ.	152	»	—	»
— — — — — թղթադ.	102	»	—	»
Պետերբուրգի քաղաքային կրքիւտ.	—	»	—	»
Ընկերութեան օրինագրաններ	102	»	—	»
Մոսկույի քաղաք. օրինագրաններ	101	»	50	»
Օդեսայի	101	»	87	»
Թիֆլիսի	98	»	50	»
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի	102	»	50	»
— — — — — Գուծաշի	102	»	50	»
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը	—	»	—	»
համադրաւ է:	—	»	—	»

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 26 յունիսի (8 յուլիսի), դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՅ TAMISE (ՏԱՄԻՅ)
Նաւը, նաւապետ CHARVET (ԿԱՐՎԷ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հալիք, Լոնդոն, մանկերով
և միջանկեալ նաւահանգիստները:

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ՀԵՋՈՒԲԵԱՆՅ, Իսկ ԲԱԹՈՒՄԻ
մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍՏ:

(№ 23) 2—2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԵՌՔԸ

Կոչված հայոց թագաւորների պատկերների ժողովածուն:

Գինը 1 ռուբլի: Դիմել ՄՕՍԿՎԱ հայոց եկեղեցին հետեւեալ հասցեով՝ Моск-
ва, Армянская церковь, г. Ивану Гечеву.
(№ 68) 2—3 (Կ.)

ԱՏԱՄՆԱՐՈՅԻ

Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սօլջակայա փողոց, սեփական տանը № 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:
(№ 145) 63—150

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Ուժի հասցնելը տարածութեան վրա.

ԷԼԷԿՏՐՈՆ

ԳԻԼԲՈՎ և զբայրների

ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտտօ սիստեմայի, որոնք իրանք
իրանք են ուղղում ու օժտում:

ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլեկտրական նշաններ.

ԳՐՈՍՈՎ (Գօնի վրա)

Գազի համար — ածուխից,

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Մեծ Սաղօվայա փողոց,

— — — անտարցիտից,

Էլեկտրոլիզ.

24

— — — կերօլից

Աղօծուկատորներ, էլէմենտներ,

РОСТОВЪ (на Дону)

1/2-ից մինչև 120 ձիու ոյժի:

ՇԱՆՔԱՐԳԻՆԵՐ.

Նախահայրների և ծրագրների ձրի-
աբար.

БР. ГЛѢБОВЫ

Շոգեմեքենաներ մեծ արագու-
թեան.

(91—№ 5)

Большая Садовая, 24.

72—100 (Կ. շ.)

Ներկայ տարվայ օգոստոսի մէկից ԹԻՖԼԻՍԻՄ ՆԻԿՕԼԱՅԵՎՍԿԻ ռուսաւմարանի հա-
մար հարկաւոր է 9—12 սենեակները բաղկացած տուն, որոնցից չորս սենեակը պէտք
է լինեն մեծ, իսկ մնացածները բնակութեան սենեակների տոլորական մեծութիւնով:
Յանկացողները կարող են ուղարկել իրանց յայտարարութիւնները ՆԻԿՕԼԱՅԵՎՍԿԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ Պ. ԲԱԹԱՆԵԱՆՅԻՆ, ՈՐ ԲՆԱԿՎՈՒՄ Է ՕՐԵՉԵՆՍՎԷՆԻ ՓՈՂՈՅԻ
ՎՐԱ, ԱԲԷՍՕԼՈՒՄՎԻ ՏԱՆԸ, № 14.
(№ 70) 1—2

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՇԵՍՏ ԵՒ

ՎԱՋԱՌԱՏՈՒՆ ղեկերի, մորթին ղեկեցկացնող և հոտաւտ, նոյնպէս և առող-
ջապահական նիւթերի և անտեսական զործիքների, բացված է Կուկիայում, վարձովի
արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:
(№ 67) ±—100 (Կ. շ.)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՈՖԷՍՈՐԱԼ ԱՐ-
ՀԵՍՏԱՆՈՅԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ.

- 1) Հանդերձների և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլոգինսկու մեթօդով և Շեքելերի
ֆրանսիական մեթօդով:
 - 2) Կարի դասեր մօդային ժուրնալներով:
 - 3) Հարթակարի և դանդաղան ձեռագործների դասեր:
 - 4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու հա-
մար:
- Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկո-
յեան:
- Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը
(№ 23) 32—40

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլջակայա փողոց, տուն Աղաբաբովի, Ամառնային զործնական հիւ-
սուածքների, ձեռքի պատրաստութեան՝ տիկիների զգեստների, մանուկների զգեստ-
ների և պարոնների շապիկների համար:

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով:

Սարպինկայի գուլպաների թիւ, սաղա, զոյնզոյն: Ներկերը տեղական են:

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 ռուբլուց սկսած մինչև 60 կօպէկ:

Սարպինկայի իւրկաներ 1 ր. 80 կ. և աւելի թանգ:

Սարպինկայի քթի աղւուկներ և զլիթ թաշկինակներ:

ՖԱՐԻԿԱՆՏԵՐ ԱՌԵՏԻՍԿԱՆ ՏԱՆ
ԲԷՆԴԵՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՕՎ
(№ 47) 19—30

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՈՆԻ ՎԱ-
ՋԱՌՈՒՄՆ

Սիդրանի աֆայտի գործարանի Բարձրագոյն հաստատում ընկերութեան Թիֆլի-
ՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄԻՄ: Յանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով:
Թիֆլիս. Ալէքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Չերեմեւսկին:
ԲԱԹՈՒՄ. Սաղօվայա փողոց, № 3, պ. Սուխանովին:
(№ 24) 14—15

ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՐ ԱՐԾՐՈՒՆԻՒՄ ՎԷՎ (հոգեբանական էտիկա).
Գինը 50 կօպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. «Մշակ» խմբագրատանը, Կենտրոնական և Խիւրեկիլի զրաւաճառա-
նոցներում և Միջայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսովի զրաւաճառանոցում.
(№ 126) 4—20

НѢМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMIĘSKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-
ՅՈՒՄ քաղաքի կենտրոնում, նորից վերանշինված, ունի 90 կահաւորված նստիչներ
որոնց սարք ու կարգը ամենայաւ արատասահմանեան հիւանդանոցների սենեակներին է
նման: Նստիչների զինը 50 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով:
Հիւանդանոցում կայ ընթերցարան-գրադարան, օրտեղ սաղարկում են հայերէն «Մշակ» և
«Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ընտանոցան, տեղեւծ, քաղցր-
ղէնների խանութ, բաղնիքներ:

Հիւանդոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 26—130 (շ.)

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ ԴԷՄ
„Ольфакториумъ Нудилинъ“
М. Д. ЖИРМУНСКАГО.
Բժշկական դէպարտամէնտից թոյլա-
տրված

ՕԼՖԱԿՏՐՈՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ
Ծախվում է 40 կօպէկով
Դեղազոյ ծական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի-
սում:
(№ 12) 36—40

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Կ են սաղարկան տեւողութիւն (պատկերով)
Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ
Գինը կարելի է զրաւաճառանոցներում: Գինն է 40 կ.: Օտար քաղաքներից դիմել
հեղինակին, «Մշակ» խմբագրատուն:
(№ 45) 3—5